



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
16 մայիսի 2023 թվականի N 185 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 137-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2023 թվականի մարտի 29-ի « Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» N 137-Ա որոշումը լրացնել հետևյալ նոր բովանդակությամբ 2-րդ կետով՝

«2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի կառուցվածքում՝

1) քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կազմում ստեղծել հողաշինության բաժին.

2) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության կազմում դադարեցնել տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժինների գործունեությունը.

3) կրթության, մշակույթի և սպորտի վարչության կազմում դադարեցնել կրթության և մշակույթի և սպորտի բաժինների գործունեությունը.

4) գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության կազմում դադարեցնել գյուղատնտեսության և բնապահպանության բաժինների գործունեությունը.

5) ֆինանսական վարչության կազմում դադարեցնել ֆինանսատնտեսագիտական բաժնի գործունեությունը.

6) անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կազմում ստեղծել անձնակազմի կառավարման և փաստաթղթաշրջանառության բաժիններ:»:

2. Սույն որոշումը տարածվում է 2023 թվականի մարտի 29-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

17.05.2023

X 

ՂՈՒԿԱՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2022թ.մայիսի 16
ք. Կապան



Ռ. Ղուկասյան